ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 ապրիլի 2019 թվականի N 84 -Ա

«ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ, ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Անդրեասյանի դիմումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1.2019թ. ապրիլի 18-ից լուծել «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Անդրեասյանի հետ 2017 թվականի հունվարի 24-ին կնքված N 14 աշխատանքային պայմանագիրը:

2. Ամալյա Առաքելյանին 2019թ. ապրիլի 18-ից նշանակել «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3.Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հասմիկ Մնացականյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ)
Ինոնա Բալայան	մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Նարինե Աթայան	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
Արամ Անդրեասյան	«Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող
Ամալյա Առաքելյան	«Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:

4,Հանձնաժողովի աշխատանքներում ներգրավել փորձագետ Կարինե Օվչյանին:

5. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

17 04 2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ.ապրիլի 17
ք. Կապան